


12846

ԳՐ. ԳԵՑՐՈՎ

ԽՂՃԻ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ

Փոխադրեց
ՆԻԿ. ԲՆՅ. ԲՈՄՆԱԿԵԱՆ

(Արտատպած «Լոյս» շաբաթաթերթից)



АВАНЧОВАНЬ Н-Д.

С. Я. АВАКОВА

Նոր-Նախիջևան

Տպարան Ս. Աազեանի

1913

891.71

7-50

ար

ԳՐ. ՊԵՏՐՈՎ

22 JUN 2001

22 JUN 2001


25 NOV 2016

ԽՂՃԻ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ

Փոխադրեց
ՆԻԿ. ԷՆԺ. ԲՈՄՆԱԿԵԱՆ

1007
34230

(Արժանատի «Լոյս» շաբաթաթերթից)



Нахичевань н-Д.
Типогр. С. Я. Авакова

Նոր-Նախիջևան
Տպարան Ս. Ասադյանի

1913

Ն ո ռ ի ռ ո ռ լ ե լ

Մեծ-Սալա գիւղի բնակիչ Մեծապատիւ

Ստեփան աղա Տոմբայեանին

Երախտագրութեամբ սիրով.

ԽՂԺԻ ԴԱՏԱՏՅԱՆԻ ԱՌԱՋ

Կէս գիշերից շատ անց մեծ քաղաքում շփոթութիւն առաջ եկաւ: Մի ինչ որ մարդիկ վայրենի աղաղակով վազում էին փողոցներով:

— Վա՛յ մեզ, վա՛յ: Ամեն բանի վերջն է: Ոչ ոքին խնայելու չեն: Աղաղակները լսում էին լուսաւոր դահլիճներում, ուր պարում էր եւրիտասարդութիւնը, հիւանդանոցի սենեակներում, որտեղ լսում էր հառաչանք ու զառանցանք և նկուղների անկիւններում, որտեղ պատըսպարում էր աղքատութիւնը: Նաբատ տուին: Մարդիկ յուզուած՝ տնիւրից դուրս էին վազում, խառնուում էին ամբոխի հետ և, անհասկանալի ընդհանուր հրկիւզով պատած, վազում էին դէպի չարագուշակ շողով լուսաւորուած մթին հրապարակը: Իսկ այնտեղ, հրապարակի վերայ, ուր արդէն խմբուած էր ամբոխը, բարձր տեղում կանգնած էին սև զգեստ հագած մի ինչ որ անծանօթ մարդիկ և իւրաքանչիւրը բռնած ունէր իր աջ ձեռքում վառած ջահ: Նրանց առաջ, նոյն բարձրութեան վերայ կանգնած էր մի կին: Նա վայելուչ տեսք ունէր, բայց նրա յստակ և փայլուն աչքերում, նրա հեզ դէմքի վերայ հրե-

ւում էր անքան մաշող թախիծ, անքան հոգեկան տանջանք, որ մի հայեացք ձգելով նրա վերայ, մարդու սիրտ սեղմւում էր ցաւ առաջացնելու չափ:

Հրապարակը լցուեց ամբոխով: Խօսակցութիւնը ու աղմուկը դադարեց: Ամենքը նայում էին կնոջ և սե հագած պատանիների վերայ, որոնք կանգնած էին նրա յետեւը, իսկ կինը, ձեռները գլխի վերայ դրած, սկսաւ խօսել արագ, հրապարակի ամենահեռաւոր անկիւնում լսելի շշնջով:

— Ո՛վ մարդիկ, ես ձեր խիղճն եմ. ես յոգնած եմ, տանջուած և ամբողջովին հիւանդ: Ես մի մեծ վէրք եմ: Ո՛հ, թէ որ ես էլ ձեզ նման կարողանայի ինձ հարեցողութեամբ քնեցնել, խառնակ կեանքով խլացնել, ստույթեամբ շողորթել: Բայց ո՛չ. ես ձեր խիղճն եմ. ես չեմ կարող հեռացնել իմ հայեացքը ճշմարտութեան հայիլուց, որի մէջ տեսնում եմ ձեր սրտերի անդրադարձնող ստույթիւնը. ես չեմ կարող այլ ևս տանել և ձեր բոլոր անիրաւութիւնները, ձեր անողորմ չարութիւնները, անասնական ցոփութիւնները: Ես ուզում եմ ընդ միշտ վերջ դնել թէ իմ և թէ ձեր կեանքին: Դուք տեսնում էք իմ յետևում կանգնած պատանիներին ջահերը ձեռներում: Այդ ջահերը—ձեր մաքի վերջի հրնարքն են: Նրանց մէջ թագնուած է կործանիչ ոյժ, որի առաջ ոչինչ են,— կրակը, ժանտախտը ու երկրաշարժը: Եթէ այդ ջահերից միայն մէկը ձգուի գետնի վերայ, կըսուի անտանելի խլա-

ցուցիչ հարուած և հարուածից յետոյ բոլոր ոյժերը, որոնք կապուած են հողի, ջրի և օդի մէջ, կարճակուեն և կնետուին կռիւ մղելու միմեանց դէմ: Օղը հրային մրրիկով պտոյտ կտայ, գետերն ու ծովերը կը գոլորշիանան, և երկրագունդը ջարդ ու փշուր լինելով կցրուի. մարդկային անօրէն աղզը կանյայտանայ և իմ վիշտը ու տանջանքները կը դադարին ձեր անօրէնութիւնները և ձեր անբարոյակոնութիւնը տեսնելուց:

Ամբոխը, լսելով այս խօսքերը, ողբաց.

— Խղճա՛, ողորմիր, խնայիր, մենք ապրել ենք ուզում:

Խիղճը ասաց.

— Խնայիր... խղճա... ապրել ենք ուզում... ո՛հ մարդիկ: Թեթեամիտ մանուկներ և խաղալիքի սիրահարներ, դուք կեանքը փշեցիք, նրան չարութեամբ թուաւորեցիք, անիրաւութեամբ ապականեցիք և դեռ կանչում էլ էք. «ապրել ենք ուզում»: Միթէ այդպէս են ապրում... դուք աղերսում էք ինձ, որ ես ձեզ խնայիմ, իբր թէ ես ուզում եմ վրէժխնդիր լինել իմ կրած վիրաւորանքի վրիպարէն: Ես սխալաւորեամբ չեմ տանջւում, այլ սիրով և առ ձեզ ունեցած կարեկցութեամբս. ես տանջւում եմ ձեր ամօթալի գործերի պատճառով: Երբ անցնում է ցերեկը, դուք քնի գրկում կամ կրքերի տապալակ մէջ մոռանում էք ձեր կեանքի նախատինքը, իսկ ես գիշերային լուսութեան մէջ մեն-մենակ անցկացնում եմ արհամարհուած արդարութեան, նուառ-

տացած սիրոյ, արատաւորուած մաքրութեան բոլոր սարսափները: Ո՛չ, ես այստեղ եկած չեմ ձեզ հետ դատ վարելու, վրէժ առնելու, այլ եկել եմ ձեզ տալու մի ելք, կեանքի ստրկական լծից ազատուելու, ես մահով ուզում եմ ձեզ խել տալ մօթութեան, նախատինքի ու աղէտի ճանկերից: Եթէ կարող էք, կեանքի պաշտպան հանդիսացէք, ապացուցէք, որ նա արժէք ունի, որ նրա մէջ կայ մի ինչ որ վհ, սուրբ բան, որի սիրոյ համար արժէ ապրել և աանջուել: Համոզեցէք ինձ, որ ձեր կեանքը երկրին ապակահում ու վիրաւորանք չի պատճառում, որ դուք ապրելու իրաւունք ունիք և ես կհրամայեմ հանգսնել չարագուշակ ջահերը:

Ազատ յոյսը ոգևորից ամբոխը, մտատանջութիւն պատճառող ազդու խօսակցութիւն բարձրացաւ: Մարդիկ յուզուած հարցնում էին իրար. ո՞վ գիտէ արդեօք, կեանքի մէջ ո՞րն է սուրբն ու վհը. բայց հրապարակի ու փողոցի վրայ կանգնողներէն ոչ ոք չգիտէր այդ: Այստեղ էին կառավարիչները, ղեկավարները, վաճառականները, երաժիշտները, հարուստները և ամենքը սարսափով խոստովանում էին, որ նրանք չէին կարծում, կա՞յ թէ չկայ աշխարհի մէջ մի սուրբ բան, նրանք վհ գողափարի մասին եղած խօսքը համարում էին դատարկ զառանցանքներ և ծիծաղում էին նրանց վրայ, ով որ հարստութիւնից և փառքից աւելի բարձր էր համարում ընդհանուր բարիքը որոնելը:

Այժմ ամենքը յուզւում ու աղմկում էին

աղերսելով խղճին մի բիչ սպասել:

— Սպասիր մի բիչ: Կգանուի... Անշուշտ կգանուի մէկը, որ կասէ քեզ, ինչ բանի համար արժէ ապրել:

Այդ միջոցին ամբոխի միջից շեշտակի կերպով վազեց մի բարձրահասակ, բարեկազմ, շուրջուցիչ գեղեցկութեամբ երիտասարդ մի կին. նրա պարանոցը և կուրծքը թափանցիկ շրջազգեստի միջից սպիտակին էին տալիս: Նա այդ զգեստով մի ժամ առաջ իշխում էր աղմկալի խնձոյքում: Առաջ մեկնելով իր հաստ ու հոլանի բազուկները, նա քաղցրահնչին, դողդողացող ձայնով բացականչեց:

— Հանգցրէք ջահերը: Ինչո՞ւ համար ձեր գէմքերը մոայլ ու հայեացքները անբարեհամբուրոյր են: Եկէք մեզ մօտ, ես ձեզ ժպտալ կսովորեցնեմ: Ո՛րքան ուրախութիւն կայ երիտասարդութեան, գեղեցկութեան, սիրոյ հրճուանքի և խնձոյքի աղմկալի զուարճութեան մէջ: Ես ապրել եմ ուղում... Միթէ չարժէ՞ ապրել: Եկէք կեանքի քաղցրութիւնները վայելենք:

Խիղճը ախրագէմ հայեացքով նայում էր գեղեցկուհու վերայ և ասում.

— Ձքնաղ թրթեռնիկ, ուրախմանուկ: Երանի թէ ես կարողանայի արլինալ քեզ նման սիրոյ ցնծութեամբ և կատաղի երիտասարդութեան հրճուանքները համարել կեանքի բարձրագոյն բերկրութիւն: Բայց ես գիտեմ, որ քո ասած ուրախութեան, սիրոյ տազնապը անցնում է, ինչպէս և գինովութիւնը, թողնելով իր յետևից ծանր հե-

տեանք: Նայում եմ ես քեզ վերայ, հրճում եմ և մտածում—«քո գեղեցկութիւնը ինչպիսի սրբութեան խորհրդանշան է»: Ինչո՞ւ քո փայփայանքները այրում են այնպէս, ինչպէս անապատի կիզիչ տօթը: Ինչո՞ւ համար նրանք մթնեցնում են բանականութիւնը, թուլացնում են կամքը, խեղդում են պարտքի ձայնը: Ինչո՞ւ համար ճշմարիտ և հեզ ու մտքուր սրտով հաւատացեալները միշտ անիծում էին քո գեղեցկութիւնը, որպէս չարիք և գայթակղութիւն: Ինչո՞ւ համար ծանր և աղէտալի տարիներում մարդիկ չեն մտածում քո մասին ու մոռանում են քեզ և միմիայն ընդհանուր բթամտութեան ժամանակներում, երբ մոռացւում է երկրի վերայ սուրբը ու վեհը, այն ժամանակ խոնարհւում են քո առաջ, պաշտում են քեզ, որպէս սրբութիւն և իրանց ամբողջ կեանքը զոհում են քեզ համար:

Հայրենիքի ծանր պատուհանների օրերում այր մարդիկ թողնում են իրանց կանանց, փեսացուները—իրանց հորսերին. հայրենիքի սէրը մի կողմն է հրում գեղեցկութեան սէրը: Վտանգաւոր տարափոխիկ հիւանդութիւնների համաճարակի ժամանակ բժիշկները նոյնպէս մոռանում են դէպի կանացի գեղեցկութիւնը ունեցած իրանց սէրը և, թողնելով սիրած էակը, զնում են օգնութեան տառապողներին: Ոչ սակաւ դէպքերում, երբ նոյն իսկ գիտութեան նուիրուող մարդիկ անյայտ երկիրներ գտնելու համար ենթարկւում են վտանգաւոր ճանապարհորդութիւնների և կամ տարափոխիկ հիւանդու-

թիւնների դէմ մաքառելու համար, նստած իրանց ուսումնական կարինէտներում և քիմիական աշխատանոցներում միջոցներ են հնարում. այսպիսով գիտութեան ծառայութիւնը գերադասւում է գեղեցկութեան ծառայութիւնից:

«Ես դեռ չեմ ասում,—շարունակեց խիղճը, այն բրիտոնէական մարտիրոսութեան ժամանակի մասին, երբ թէ երիտասարդները և թէ կոյսերը սիրոյ բոլոր թափը դրին աշխարհի համար խաչուած Փրկչի ոտների տակ: Այն ժամանակ տղամարդկանց և կանանց մէջ կոտորած սէրը չէր փառաբանւում որպէս աստուածային զգացմունք: Նա այն էր, ինչ որ պէտք է լինէր. գրական որդեծնութեան և հիմք ընտանիքի: Բայց ահա հասաւ ժամանակը, երբ մարդիկ սառը վերաբերուեցին դէպի երկրային թագաւորութիւնը և դէպի երկնային արքայութիւնը: Մարդիկ անգործութեան մէջ մնալով սկսեցին իրարու պաշտել, տղամարդը կնոջը և կինը—տղամարդուն. սիրոյ հրճուանքը աշխարհի մէջ ամենաբարձր ուրախութիւնը համարեցին. բայց արեան ջիւղում թիւնը սառչում է, բթանում է մարմնի հրապոյրը, մեղմանում է կոպիտ անասնական զգացմունքը և այսպիսով երկրպագութեան առարկան վերջ ի վերջոյ դաճնակէց է լինում:

«Ո՛չ, չքնաղ մանուկ,—վերջացրեց խիղճը,—իս քեզ համար չեմ կարող հաշտուել կեանքի անիրաւութիւնների հետ, չեմ կարող ընդունել քո փայփայանքները և գեղեցկութիւնը իբրեւ աշխարհի սրբութիւն:

Դու մարդկանց սրտերում մաքուր կրակ վառելու փոխարէն թոյն ես թափում. քեզ համար ես չեմ հանգցնիլ ոչ մի ջան:

Երիտասարդ գեղեցկուհուն փոխարինեց հոշակաւոր գիտնական մի ծերունի լայն ուռուցիկ ձակատով ու արտայայտող աչքերով: Հանդարտ նա մօտեցաւ պատուանդանի մօտ և ասաց.

— Դու ուզում ես իմանալ, թէ ինչն է կեանքի բարձրագոյն նպատակը, ինչ բանի համար արժէ աշխատել, ապրել և տանջուել: Եթէ թոյլ տաս, ես կասեմ. «Մեր կեանքի բարձրագոյն նպատակը տեսանելի աշխարհի ռեպրեսենտանտներն են, բնութիւնը ուսումնասիրելն և նրա գաղտնիքների վրայից մէկ մէկու յետևից ծածկոյթները վերցնելն է: Դեռ ես բոլորը հետազոտուած չէ, գիտութեան շէնքը անկատար է,—յանուն գիտութեան խնայիր կեանքը, տուր մեզ ժամանակ լուծել բնութեան բոլոր գաղտնիքները, տիրապետել նրա ոյժերի վրայ:

Խիղճը ասաց ծերունուն:

— Դիտեմ ես քեզ, գիտութեան անյողգողդ բուրմ: Հարուած ուշադրութեամբ ես գիտում էի քո իւրաքանչիւր քայլը. ես գիշերները երկար նստում էի քեզ հետ քո քիմիական աշխատանոցներում, թանգարաններում և կաբինէտներում. ես բարձրանում էի քեզ հետ լեռների գագաթները, իջնում էի երկրի ծոցը, ծախում տանջում էի տօթային անապատներում, սառ-

չում էի սառույցների ու ձիւների մէջ: Ես ի սըրտէ յարգում էի քո գիւտերը, հիանում ու զարմանում էի քո բնութեան ոյժերի վերայ ունեցած գիտութեանդ ու կարողութեանդ:

Ես քեզ կուրօրէն հաւատում էի, իմ լաւագոյն յոյսերը քո վերայ դրել էի. ես սպասում էի, որ դու մարդկութիւնը կտանես դէպի բաղդուութիւն, ճշմարտութիւն և կազատես չարիքից:

Դու գիտութեան լապտերով աշխարհի ծակոծուկը ման հկար, լուսալոյսի երկնային կաթնածիրը և արեան անօթների ոստայնը, դու բացատրեցիր ինձ թէ ծովի յատակի և թէ երկրի ծոցի գաղտնիքները. լայց ինչի՞ համար են այս բոլորը, ի՞նչ իմաստ կայ այս բոլոր աշխարհային շինուածքի մէջ և ո՞վ է նրա տէրը,—դու լուծելու անկարող ես: Դու բնութիւնը մարդուն հպատակեցրիր, դու տուիր նրան իշխանութիւն կայծակի և շողու վերայ, բայց դու չես կարող ցոյց տալ նրան, թէ՞ դէպի ո՞ւր պէտք է ուղղել ոյժերը: Քո գիւտերը մարդկանց ձեռքում այնպէս են, ինչպէս կրակը կոյրի ձեռքում. նա կարող է նըրանով լուսաւորել և տաքացնել. բայց կարող է այրել թէ իրան և թէ ուրիշներին: Քեզ չի հետաքրքրում, թէ մարդիկ ի՞նչ կանեն քո գիւտով, ի՞նչ բանի նրանք կգործադրեն: Դու միակերպ հպարտանում ես թէ ուրիշից պաշտպանուելու զրահով և թէ զրահները կործանելու ծովառումով և ականով. դու միևնոյն եռանդով որոնում և գտնում ես դադ թէ բնակարանները լուսաւորելու համար և թէ պատերազմի մէջ մարդ-

կանց խեղդելու:

Դու տոտում ես, «Տուր մեզ ամեն ինչ գիտենալ, խնայիր մեզ գիտութեան սիրոյն»:

«Ի՞նչպիսի գիտութեան սիրոյն: Բարձրագոյն գիտութիւնը կեանքի գիտութիւնն է: Դու գիտես ինչպէս է ապրում խոտը, մփղուկը և ամենափոքրիկ սրբը. լայց գիտե՞ս արդեօք ինչպէս պէտք է ապրի մարդը: Իմացիր, եթէ ես, ձեր խիղճը, պիտի տանջուիմ ու մաշուիմ և ձեր համալսարանների, թանգարանների ու գրադարանների մէջ ափսոսանք, ինչպէս և անգրագէտ ամբոխի մէջ, եթէ մարդ, համալսարանական վկայագիրը դրած իր գրպանում, առաջնայ նման պիտի լինի կողոպտիչ, թոյլերին ճնշող, անողորմ, լինեալսէր, — ի՞նչ ուրախութիւն կտայ ինձ քո գիտութիւնը:

«Դու չես կարող բուժել իմ ցուերը. ես չեմ կարող ընդունել քո աշխատանքները մարդու համար իբրև գերագոյն բարիք:

«Քո գիտութեան լոյսի համար ես չեմ հաշտեցնել իմ ջահերը: Դու ինձ ցոյց չտուիր ի՞նչ բանի համար արժէ ապրել»:

Ամբոխի միջից լսուեց մի նոր ձայն:

— Եթէ դու չես կարող ընդունել գիտութիւնը իբրև մեր դարի սրբութիւն, ուրեմն համաձայնիր, որ գեղարուեստի, նկարչութեան և երաժշտութեան առաջ—դու կարող ես խոնարհուել: Երգիչը և ջութակահարը, ընդհանրապէս երաժիշտը հրաշալի հնչիւնների մէջ լցնում է իր ամբողջ հոգին: Հազարաւոր մարդիկ իրանց շուն-

չը բռնած ուշադրութեամբ լսում են և դերասանը տանում է իր յետեից լսող ամբոխին դէպի քաղցր հնչիւնների ու ցնորքների աշխարհը: Նրա կարիչը իւր հանձարով կենդանացնում է սառը մարմարիոնը, մեռած կաւը, յաւերժացնում է մտքերը անագապղնձի մէջ. նրա ներկերը պայծառ, կենդանի նկարների մէջ վերարտադրում են կեանք. նրա նկարները և արձանները ճշմարիտ որ աշխարհի սրբութիւնն են. նրանց մէջ պահպանւում ու լուսաւորւում է Աստուածային կայծը. նկարիչը իր հոգին մարմնացրեց նրանց մէջ. նա, որպէս ստեղծող, իւր ստեղծագործութիւնների մէջ կեանքին շունչ փչեց:

— Գեղարուեստ: Սուրբ գեղարուեստ.— ազգակից ամբոխը.— խնայիր մեզ ի սէր գեղարուեստի: Տես, մենք որքան պատկերասրահներ, թանգարաններ ունինք: Մենք մեծ գումարներ ենք վճարում արձանների, պատկերների համար, մենք հոշակում ենք բանաստեղծներին, նկարիչներին, երաժիշտներին. նրանք մեր հպարտութիւնն ու փառքն են:

Խղճն, ի սէր գեղարուեստի:

— Ես խնդրում եմ ձեզ մատնանշել, ի՞նչն է սուրբ և բարձր ձեր կեանքում,— ասաց խիղճը:

Դուք գեղարուեստը անուանում էք սուրբ. բայց սուրբը պարտական է լուսաւորել, վսեմը բարձրացնել, ինչպէս ջերմութիւնը տաքացնում է և լոյսը լուսաւորում է:

Ինչո՞ւ համար գեղարուեստի ջերմեանը սպասաւորները ամենից առաջ իրանք չեն լինում

սրբութեան օրինակ, չեն կարող ծառայել վեհ
գաղափարի: Նրանք փայլուն կերպով կեանքը
արտադրում են նկարների վերայ, կենդանացնում
են արձանների մարմարիոնը ու անագապղինձը:
Բայց նրանք ինչպիսի կեանք են պատկերա-
ցնում մեռած կաւն ու քարը: «Կեանքն ինքն
ըստ ինքեան շատ քիչ կարժէ,—ասում էր հին
իմաստունը,—նրա արժէքը կախումն ունի այն
պարունակող իրերից, որ մենք նրա մէջ ներ-
մուծում ենք»: Ես, ձեր խիղճը, տանջում եմ
ախտով, մարդու պարապ կեանքի մոլութիւնով
և գեղարուեստը, եթէ այս դատարկութիւնը,
ախտը և մոլութիւնը պատկերացնում են իրանց
արտադրութիւնների մէջ, ինչո՞ւ համար ես նրան
պէտք է ընդունեմ իբր աշխարհի վեհ և սուրբը:
Եւ եթէ վատ ցանկութիւնների գեղեցկութիւնը,
որը մարմնացրած է կենդանի գեղեցկուհու մէջ,
չկարողացայ համարիլ սուրբ, ինչո՞ւ համար այն
վատ ցանկութիւնների երգի հնչիւնը, նկարնե-
րը ու արձանները, մարմնաւոր գեղեցկութեան
պատկերացումը պիտի լինին սուրբ: Արտա-
քին խարուսիկ փայլն ու զարդը չեն բարձրա-
ցնում ներքին դատարկութեան արժէքը: Դրա
համար գեղարուեստի բոլոր արտադրութիւնները
շատ քիչ բացառութեամբ երեւան են գալիս մի-
միայն իբր կեանքի արտաքին զարդարանք եր-
բէք չլուացնելով ու չբարձրացնելով նրան: Քա-
նի հազար կտուներ զարդարում են ձեր թան-
գարաններն ու պատկերասրահները և ինչպէս
այցելուների կեանքը սակաւ զարդարուած է

արդարութիւնով ու բարութեամբ: Ո՛չ, ես չեմ
կարող հանգցնել ջահերը: Գեղարուեստը մարդ-
կանց համար թանկ արժէ, բայց նա չունի աշ-
խարհի սրբութեան բարձր արժէքը:

Այս ամենը ինքնախաբէութիւն է: Ժամա-
նակ է պատուել դիմակը, այլեւ ոյժ չմնաց տա-
նել կեղծաւորութիւնն ու ստութիւնը:

«Վայր գցէք ջահերը,—խիղճը դարձաւ իւր
ուղեկիցներին:—Թող մահը կտրէ դարաւոր ա-
նարդարութեան խճճուած հանգոյցը»:

Երիտասարդները գլխների վերայ բարձրա-
ցրին ջահերը:

Չարագուշակ կրակները բռնկուելով լուսա-
ւորեցին մահացու սարսափով ու յուսահատու-
թեան թախիձով բռնուած դէմքերը: Ամբոխը ան-
շնչացաւ: Սպասում էին վախճանին:

Յանկարծ վերջին շարքերից լուեց մի ձայն:

— Սպասի՛ր: Կորսնցնել հեշտ է: Լաւ մտա-
ծիր, կարելի չէ՞ կորածներին կենդանացնել:

Այդ ասում էր ամենքին անծանօթ եկեղրը:

Գունատ դէմքը, ճակատի խոր կնճիռները,
լուսաւոր, խոր մտածող հայեացքը վկայում էին
պահքի, աղօթքի խստութիւնների ևրկարատե
ներքին աշխատանքի, լարուած մտքերի, խաղա-
ղութեան ու հոգու մաքրութեան մասին: Ամբո-
խը յետ քաշուեց, բաց արւա ճանապարհ դէպի
բլուրը: Շատերը վեր ցատկելով կանչում էին
նրան.

— Խօսի՛ր, խօսի՛ր, համոզի՛ր նրան. ասա՛,

որ աշխարհում կայ վսեմ բան, որ կեանքը լաւ է մահից:

Եկուորը առաջ անցաւ ու ասաց.

— Ես հէնց նոր եմ եկել անապատից, ուր առանձնութեան մէջ անցկացրի շատ տարիներ: Ես, ինչպէս և դու, երկար ժամանակ հիւանդ էի հոգով, նայելով մարդկանց անիրաւութեան ու չարութեան վերայ: Զրկութեան արտասուքները հալած արձճի նման ընկնում էին իմ սրտի վրայ, բթացած ամբոխի աղմկալի խնձոյքը թունաւորում էր իմ հոգին. ես խեղդւում էի ընդհանուր ստութեան, մատնութեան, ստորաբարձութեան մէջ. ոյժ չմնաց այլ ևս համբերելու:

«Ես նզովեցի չարութիւնը ու փախայ անապատ. բայց ես չնզովեցի մարդկանց և կեանքը, ես չմոռացայ նոյնպէս և աշխարհը: Ես երկար տարիներ մենակութեան մէջ, կիանքի Մեծ Դըրքի, Փրկչի խօսքի յետևիցն էի և մոռնում եմ, որ աշխարհում և կեանքի մէջ կարող է լինել մի վսեմ ու սուրբ բան: Դու այստեղ քո դատաստանի առաջ դատապարտեցիր թէ գեղեցկութիւնը իւր զուարճութիւններով, թէ հպարտ գիտութիւնը, թէ մարդու հանճարը, այսինքն գեղարուեստը. քո դատաստանը արդար է: Սխալ հիմունքների վրայ դրած ժամանակակից գիտութիւնը չի փրկիլ աշխարհը: Գեղեցկութիւնը բիրտ է կոպիտ հրճուանք, գիտութիւնը, գեղարուեստը իւր խարուսիկ փայլով ծածկում է հոգու աղբատութիւնը: Այս անօթների միջի ըմպելիքը բարձր տասնամանի չէ: Այս պատճառով, եթէ կա-

մենում ես մարդկանց բարիք, ուրեմն մի քանդիր կեանքը, մի կոտորիր և մի արհամարիր նրա լաւագոյն անօթները. դու նրանց միջի ըմպելիքը նորոգիր: Ինչպէս Քրիստոս Փրկիչը կանայի հարսանիքում շուրջ գինիի փոխադրեց, այնպէս էլ Քրիստոսի նոյն ոյժովը վերաստեղծիր ներկայ գեղեցկութեան, գիտութեան և գեղարուեստի էությունը: Այժմ մարմնի գեղեցկութիւնը խօսում է և հասկանալի է միմիայն մարմնին. նա, որպէս իւր կրակի վերայ արթնացնում է և ուռցնում է մարդու կոպիտ ու վատ կրքերը: Լուսաւորիր նրան ոգու գեղեցկութեամբ և չքնադդէմքի լուսաւոր, ճառագայթափայլ անքերը կարթնացնեն ոչ թէ վատ ցանկութիւններ, այլ հոգու խեղդուած ու լաւագոյն զգացմունքներ: «Գիտութիւնը ուսումնասիրում է բնութիւնը և նրա ոյժերը հպատակեցնում է մարդկանց. նա մարդու հպարտութիւնն է և գուշակում է նրա փառքը: Դու նրան առաջնորդիր ուրիշ ճանապարհով: Սուրբ գրքի բանաստեղծը ասում է. «Երկինքը պատմում է Աստուծոյ փառքը»: Գիտութիւնը թող մեկնէ մարդկանց Աստուծոյ փառքի այդ մեծութիւնը. թող նա բանայ մարդկանց արարչագործութեան իմաստութիւնը իր բոլոր պարզութեամբ, զմայլեցնէ մեզ տիեզերքի հրաշալի ներդաշնակութեամբը, ներշնչէ մեզ ակնածութեամբ խոնարհել Ծայրագոյն ու Յաւիտենական էակի առաջ: Թող նա ցոյց տայ մարդուն յաւիտենականի վեհութիւնը, այն ժամանակ նա կարթնացնէ վեհ զգացմունք մարդու մէջ, այն

1007
34230

ժամանակ նա ինքն էլ կլինի մի ինչ որ վեհ բան երկրի վերայ:

«Դեղարուեստը անդրադարձնում է կեանքը, բայց եթէ կեանքը վատ է, արժէ արդեօք անդրադարձնել նրան: Միտք կա՞յ արդեօք արտադրել նրան և՛ ներկերի, և՛ մարմարիոնի, և անագապղնձի մէջ: Նկարիչը, որ բարձրի կնիքն է կրում, պարտական է մեզ աւելի վեր բարձրացնել, բարձրացնել մեր հոգին, ազնուացնել սրտերը: Նրա նշանաբանն պէտք է լինի կեանքը պատկերացնել մեզ ոչ այնպէս, ինչպէս նա կայ, այլ այնպէս, ինչպէս նա պարտական է լինել: Նրան մատչելի են, մեզ անհասանելի հոգու բարձրութիւնները. թող նա խորապէս զգայ, հասկանայ,—և մեզ կպատմէ հնչիւն ոտանաւորների, փայլուն և կեանքի կենդանի պատկերների մէջ վեհագոյն գեղեցկութիւնը, արդարութեան, սիրոյ և բարձրութեան գեղեցկութիւնը:

«Եւ այն ժամանակ գեղարուեստը ճշմարտապէս կլինի սուրբ, նկարիչը թանկ կլինի աշխարհի համար նրանով, որ նա բարի զգացմունքներ արթնացրեց մարդկանց սրտերի մէջ: Բայց ուրիշներին լուսաւորելու համար, ինքդ լոյս պէտք է ունենաս, այլ կերպ

Ինչպէս դու պիտի լինիս առաջնորդ,
Քանի որ ուղին է քեզ անծանօթ:

«Իսկ ճշմարիտ կեանքի ուղին կարելի է իմանալ միայն նրանից, Ով ասաց Իր համար, «Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք»:

Այս ճանապարհի վերայ կարելի է ճանաչել կեանքի իսկական արժէքը: Ահա և աշխարհին պիտի ասենք նոր ճանապարհի մասին:

«Մարդկութեան վաղեմի կեանքը տանջեց ու մաշեց քեզ: Դու մարդկանց յուսահատութեամբ, չարչարութեամբ խիղճը, երկրի վերայ վսեմ ու սուրբ բան գտնելու նպատակով վճռեցիր ոչնչացնել ամբողջ մարդկային ազգը: Իզո՞ւր: Յիշիր մարդկանցից իրաչառած Աստուծոյ Որդուն: Նա Քիթսեմանի պարտիզում չարչարուել է և տանջուել աւելի քան դու, սակայն, գողգոթայի վերայ չնոյվեց մարդկանց, այլ աղօթում էր Աստուծուն նրանց համար: «Երկրի վերայ կայ վսեմ և սուրբ, այդ է Քրիստոսի արդարութիւնը և սէրը: Եւ դու, ով խիղճ, հանդուր քո սոսկալի ջանքեր և նրանց փոխարէն վառիր աւետարանի կերօնը: Նրանց հետ մէկտեղ ցած իջիր բարձրութիւնից և մտիր այդ խելագարուած մարդկանց ամբոխի մէջ. առանց չարութեան, առանց յանդիմանութեան ծածկելով քո սրտի տանջանքները, լուսաւորիր նրանց ամեն մէկի հոգու ամենամթիւն անկիւնները: Մի տեղում քեզ կհալածեն, զնն միւս տեղը: Հասկացիր, որ դու չես լինիլ յաւիտեան անհիւրնակալ»:

Անապատականը լռեց: Արեւելքում՝ երկնքի ծայրը կարմրեց: Սկսում էր լուսանալ: Լոյսի հետ մէկտեղ եկուորի խօսքերից յետոյ, լուսացաւ և խղճի վշտահար դէմքը: Նա հանգցրեց երիտասարդների ձեռքում եղած սոսկալի ջանքերը, վառեց մաքուր ձէթով կանթիղը, բլրից ցած իջաւ

և իսկոյն կորաւ ամբոխի մէջ:

Ընթերցող, եթէ մի-մի ժամանակ լսես,
թէև թոյլ ժխոր, կամ ձայն սրտիդ շէմքում, խուչ
մի մնար. այդ աշխարհի տառապողը, մարդկային
խիղճն է, որ խնդրում է ապաստան. բայց նրա
համար քո հոգին, ընդունիր զոնէ միառժամա-
նակ Աստուծոյ հիւրին:

ՀՀ Ազգային գրադարան



NL0316504

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Դրմի՛ Նաхичеванъ н-Д, 25 лин. д. № 2
Свящ. Н. Боснакіанцъ.